

*ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊԵԱՆ**Բանասիրական գիտությունների թեկնածու*

ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐԸ

Հայերենի գիտական ուսումնասիրության համար կարևորելով բարբառներում առկա լեզվական իրողությունները՝ իրանագետ Ռ. Աբրահամյանը շուրջ մեկ դար առաջ գրում է. «Ամեն մի ինտելիգենտ անձնաւորութիւն կարիք կը զգայ գաղափար կազմելու իւր մայրենի լեզուի ամբողջութեան մասին. այդ գաղափարը կարելի է կազմել միայն բարբառաբանութեան տուեալներից» (*Ռ. Աբրահամյան*, Ի՞նչ կերպ հնարաւոր է հայերենի գիտական ուսումնասիրութիւնը, «Արարատ», 1912, ապրիլ, էջ 364-377):

Քերովբե Պատկանյանը 1869 թ. «Ուսումնասիրութիւն հայոց լեզուի բարբառների մասին» ռուսերեն աշխատությունում զանգատվում է, թե բարբառները անհետանում են՝ տեղի տալով Աստրախան-Երևանյան բարբառին, որ գրաբարի բառարաններում տեղ չգտած «հայ բարբառների բառամթերքը նոյնպէս խիստ արագ նուազում է և սպառնում է անհետ կորչել մօտաւոր ապագայում»:

Գրական լեզվի զարգացման պայմաններում թուլանում են բարբառների հետագա գոյատևման հիմքերը, վտանգ է առաջանում դրանց անհետացման: Ներկայումս լեզվական այդ հարստության պահպանման գործում մեծ դեր կարող են կատարել հայրենակցական միությունները: Ինչպէս իրավացիորեն նկատում է Հովհ. Թումանյանը, «Ժողովրդական բարբառներից օգտվելը ոչ թե դատապարտելի է, այլ հենց դա է բնական ճանապարհը կայտառ ու կենդանի լեզու ստեղծելու»: Իրապես, բարբառային խոսքը միևնույն տարածքով միավորված հանրության մեջ կայտառ ու կենդանի շփում է ստեղծում և համատեղում նրանց հարազատության ջերմ կապով:

Ներկայիս հայրենակցական միությունները, ըստ լեզվական, բարբառային հաղորդակցության, կարելի է բաժանել մի քանի խմբի. ա) *հայրենակցական միություններ, որոնց անդամները պահպանել են բնօրրանը և հաղորդակցվում են մայրենի բարբառով*, բ) *միություններ, որոնց անդամներն ապրում են բնօրրանում, սակայն կորցրել են մայրենի բարբառը*, գ) *հայրենի բնօրրանը կորցրած, սակայն մայրենի բարբառը պահպանած միություններ*, դ) *միություններ, որոնք կորցրել են և՛ բնօրրանը, և՛ մայրենի բարբառը*:

ա) *Հայրենակցական միություններ, որոնց անդամները պահպանել են բնօրրանը և հաղորդակցվում են մայրենի բարբառով*: Այդպիսի միություններից են՝ «Արցախ», «Զրաբերդ» (Արցախ, Մարտակերտ), «Վարանդա» (Արցախ, Հաթերք), «Տավուշ», «Թումանյան», «Նոյեմբերյան», «Հանուն Գուգարաց աշխարհի», «Մյունիք», «Կյորես», «Միսական» (ըստ «Աշխահացույցի»՝ Երնջակ, Ճահուկ, Վայոց ձոր, Գեղարքունիք, Սողք, Աղահեճք, Օղուկ, Հաբանդ, Բաղք, Ձորք, Արևիք, Կովսական գավառները): Նշված միություններից «Թումանյան», «Նոյեմբերյան», «Հանուն Գուգարաց աշխարհի» միությունների հաղորդակցության միջոցը Արարատյան բարբառի Լոռու խոսվածքն է: «Ար-

ցախի», «Ջրաբերդի», «Վարանդայի» մայրենի բարբառը Ղարաբաղի բարբառն է: «Տավուշ», «Սյունիք», «Կոթրես», «Սիսական» հայրենակցական միությունների խոսվածքները Ղարաբաղի բարբառի խոսվածքներից են:

Արևելյան խմբակցության Ղարաբաղի բարբառը պատկանում է «*ուս*» ճյուղին: Այն լեզվական ընդհանրություններ ունի «*ս*» ճյուղի Հաղրուքի, Շաղախ-Խծաբերդի և Ուրմիայի, «*լ*» ճյուղի Մարաղայի բարբառների և Գորիսի, Կապանի, Ղազախի, Գանձակի, Հավարիկի և այլն ենթաբարբառների հետ: Տարբեր ժամանակներում Լեռնային Ղարաբաղի տարբեր վայրերում բնակություն են հաստատել այլ բարբառներով և խոսվածքներով հաղորդակցվողներ, որոնք լեզվական տարրեր են ներմուծել Ղարաբաղի բարբառ: Բարբառակիրների աշխարհագրական տեղաշարժերի մասին ստույգ տեղեկություններ է հաղորդում Մ. Բարխուդարյանն իր «Արցախ» աշխատության մեջ: Ըստ այդմ՝ Ղարաբաղում ապրում են նաև մասնավորաբար Ղարաղաղից, Նախիջևանից, Խոյից և այլ վայրերից գաղթածներ, ինչպես, օրինակ՝ Ստեփանակերտի Վարազաբուն գյուղում, Հաղրուքում, Ջանյաթաղում ապրում են Ղարաղաղից, Նախիջևանիկում՝ Հին Նախիջևանից, Մեհտիշենում, Մարդարաշենում, Նորագյուղում, Մարտունու Սպիտակաշենում՝ Խոյից գաղթածներ և այլն: Վերոնշյալ բարբառների առկայության, դրանց փոխադրեցության և այսօր արդեն «ուս» ճյուղի Ղարաբաղի բարբառի գերակայության մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդում Կամո Դավթյանը «Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը» ընդարձակ ուսումնասիրության մեջ:

Չնայած գրական հայերենի մեծ ազդեցությանը՝ Ղարաբաղի բարբառն այսօր իսկ պահպանում է իր կենսունակությունը: Այդ բարբառով այժմ խոսվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, Հյուսիսային Կովկասի և Միջին Ասիայի որոշ տարածքներում, Չարենցավանում, Աբովյանում և այլուր: Ղարաբաղի բարբառի խոսվածքներից են Տավուշի, Իջևանի, Կարմիրի խոսվածքները, որոնցով այսօր խոսում են 200-300 տարի առաջ Ղարաբաղից վերաբնակված ղարաբաղցիները: Ընդհանրապես բնական այլ վայրեր ընտրած ղարաբաղցիները սիրում են իրենց բարբառը և միմյանց հետ հաղորդակցվում են մայրենի բարբառով: Վերոնշյալ սահմանները նկատի ունենալով՝ կարելի է ասել, որ այժմ Ղարաբաղի բարբառը Արարատյան բարբառից հետո ամենաշատ խոսողներ ունեցող բարբառն է:

բ) *Միություններ, որոնց անդամներն ապրում են բնօրրանում, սակայն կորցրել են մայրենի բարբառը.* «Երևան և Երևանցիներ», «Քանաքեռ-Զեյթուն», «Մեղրի», «Վիրահայեր»: Նշված միություններից առաջին երկուսի մայրենին Երևանի խոսվածքն է, որն այսօր կրելով գրական հայերենի զորեղ ազդեցությունը՝ մասամբ մոռացվել է և վերածվել ժողովրդախոսակցական հայերենի: Գրական լեզվի ազդեցությունը կրել է հատկապես մայրաքաղաքը: Շրջաններում Երևանի բարբառը առավել պահպանված է:

Բարբառագիտական գրականության մեջ Երևանի բարբառ լեզվաբանական եզրը ընդունված է կոչել Արարատյան անունով (տե՛ս **Հ. Աճառեան**, Հայերեն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 25): Այն հայոց լեզվի հնագույն տարբերակներից է, որի հետքերը գտնում ենք հին աղբյուրներում՝ սկսած 13-րդ դարից: Առաջինը դրանցից Վարդան Բարձրաբերդցին է: Երևանի բարբառով է գրված նաև 17-րդ դարի վաճառական Ջաքարիա Ագուլեցու «Օրագրությունը» (տե՛ս **Ջաքարիա Ագուլեցի**, Օրագրություն, Երևան, 1938): Երևանի բարբառի առաջին գրավոր աղբյուրներից են նաև 1675 թ.

Մարսելում հրատարակված «Արհեստ համարողութեան» և 1687 թ. Վենետիկում լույս տեսած «Պարզաբանութիւն» աշխատությունները:

Արարատյան բարբառը դարեր շարունակ եղել է Այրարատ, Գուգարք նահանգների, նաև հարակից վայրերի բնակչության հիմնական մասի հաղորդակցության միջոցը: Այս բարբառով են խոսել Արևելյան Հայաստանի կենտրոնական մասում, Նախիջևանում, Աստապատում, Գաբեղյանքում (Կաղզվան), Ճակատքում (Սուրմալու), Խանլարում, Շահումյանում և այլուր: Արարատյան բարբառով խոսող բնակավայրեր կան Վրաստանի Մառնեուլի շրջանում (տե՛ս *Ս. Բաղդասարյան-Թափալցյան*, Արարատյան բարբառի խոսվածքները Հոկտեմբերյանի շրջանում, Երևան, 1973, էջ 15):

Հետագայում բազմաթիվ գաղթեր պատճառ են դարձել նշված տարածքներում նաև այլ բարբառներով խոսվելու: Բնակչության տեղաշարժերը, Շահ-Աբասի մեծ գաղթը, այնուհետև 1827 թ. ռուս-պարսկական պատերազմները փոփոխում են բարբառի տարածման սահմանները՝ մեծ հետք թողնելով բարբառի վրա:

Ներկայումս Արարատյան բարբառը ընդգրկում է ՀՀ բազմաթիվ բնակավայրեր՝ Աշտարակի (Փարպի, Օշական, Մուղնի, Մաղմոսավան, Կոշ), Էջմիածնի (Դոխս, Դաշտ, Շահումյան, Ծաղկունք, Փարաքար, Գեղակերտ, Հայթաղ, Ամբերդ, Արևաշատ), Արմավիրի (Նալբանդյան, Գետաշեն, Տանձուտ, Վարդանաշեն, Փոքր Շահրիար, Արագափ, մասամբ Մարգարա), Նաիրիի (Դովրի), Կոտայքի շրջանները: Արարատյան բարբառի խոսվածքների ամենամեծ տարածքն ընդգրկում է Լոռին:

Մինչև վերջերս բարբառագիտական գրականության մեջ ընդունված էր Վայոց ձորի բնակավայրերից Եղեգնաձորը, Արենին, Խաչիկը, Գնիշիկը, Աղավնաձորը, Ռինդը, Զիվան, Արփին, Հորսը, Գնդեվազը և Կեչուտը նույնպես համարել Երևանի բարբառին պատկանող խոսվածքներ: Ա. Վարդանյանը «Վայոց ձորի խոսվածքների լեզվաաշխարհագրական բնութագիրը» աշխատության մեջ նշված բնակավայրերի խոսվածքները դասում է Արարատյան և Զուղայի բարբառների միջև և կոչում է Վայոց ձորի միջբարբառ (տե՛ս *Արտակ Վարդանյան*, Վայոց ձորի խոսվածքների լեզվաաշխարհագրական բնութագիրը, Երևան, 2004):

Բջին, Արզականը, Ալափարսը Հրազդանում և Գեղամավանը, Դմաշենը, Ծաղկունքը Մևանում նույնպես մտնում են Արարատյան բարբառի սահմանների մեջ: Ընդհանուր առմամբ Արարատյան բարբառով հիմնականում խոսում են նրանք, ում հաջողվել է բնօրրանում մնալ: Շահ-Աբասի բռնագաղթին ենթարկվածներից շատերը, չմոռանալով մայրենի բարբառը, 400 տարի հետո կրկին ներգաղթում են Հայաստան և բնակություն հաստատում Արարատում, Նոր Կյանքում, Մուսալեռում, Արևիկում և այլուր:

Երևան քաղաքի խոսվածքը Արարատյան բարբառի հիմնական խոսվածքն է: Քանաքեռի, Առինջի, Ջրվեժի, Նորք և Կոնդ թաղամասերի հիմնական բնակչությունը բնիկ է, և նշված վայրերում առավելապես մաքուր է պահպանվել Արարատյան բարբառը (տե՛ս *Ռ. Մարկոսյան*, Արարատյան բարբառը, Երևան, 1989, էջ 34-47):

Երևանի խոսվածքի հիմնական օրբանը Նորքն է (= «նորատունկ այգի», սեռ.՝ *Նորքա*), որ այժմ Երևանի թաղամասերից մեկն է: Մինչև 20-րդ դարի 30-ական թթ. այն առանձին մի գյուղ էր, որը քաղաքի՝ Շրհարի հետ կապվում էր մի արահետով: Նորքի խոսվածքն ու բանահյուսությունը ժամանակին բավականին տարբերվել են քաղաքի

խոսվածքից ու բանահյուսությունից:

Երևանցիներ ապրում են Թիֆլիսի Հավլաբար թաղամասում, Բյուրականի Երևանի մայլալում, Պարսկաստանի Սպահան քաղաքում և այլուր, և հաղորդակցվում են մայրենի բարբառով: Երևանի բարբառը մոռացվել է միայն Երևան քաղաքում:

«Ս» ճյուղին պատկանող Մեղրիի հարուստ բարբառը գոյատևել է մինչև 1900-1920 թթ.: Մեղրիի բարբառին բավականին մոտ Կարճևանի բարբառը այսօր իսկ կենսունակ է և ծառայում է որպես հաղորդակցության միջոց միայն Կարճևան գյուղում: Շրջանի մյուս գյուղերը, որոնք ժամանակին հաղորդակցվել են Մեղրիի բարբառով, այսօր խոսում են բարբառային երանգավորում ունեցող գրական-ժողովրդախոսակցական հայերենով:

Եթե «Վիրահայերի միասնության» օրրանը դիտարկենք Թբիլիսին, ապա պետք է ասել, որ քաղաքաբնակ վիրահայերը ևս կորցրել են իրենց մայրենի՝ Թիֆլիսի բարբառը և այսօր խոսում են ժողովրդախոսակցական հայերենով: Բավականին լավ ուսումնասիրված Թիֆլիսի բարբառը իր ամբողջական արտացոլումն է գտել Սայաթ-Նովայի երգերի, Գ. Սունդուկյանի դրամատիկական ստեղծագործություններում և Պետերմանի («Թիֆլիզի բարբառի ուսումնասիրություն», 1867 թ.) ու ռուս լեզվաբան Թոմսոնի («Լեզվաբանական հետազոտություններ», 1887 թ.) գիտական ուսումնասիրություններում:

զ) *Միություններ, որոնք կորցրել են բնօրրանը, սակայն պահպանել են բարբառը:* «Նախիջևան», «Սուրմալու-Իգդիր», «Շարուր», «Սասուն-Տարոն», «Էրզիր», «Բագրևանդ», «Նիգ-Ապարան», «Էրզրում», «Համշեն», «Շահումյան-Գետաշեն», «Արծվաշեն», «Գարդման» (Ղազախ, Թովուզ):

Այս ենթախմբում որոշակի վերապահումով կարելի է ընդգրկել «Սևան», «Շիրակ», «Բոլնիս-Խաչեն» միությունները: Սևանի ավազանում բնիկների հետ ապրում են բնօրրանը կորցրած գաղթականներ Մուշից, Արծկեից, Ռշտունիքից, Արծափից, Բայազետից և Արևմտյան Հայաստանի այլ վայրերից: Շիրակի դաշտավայրի բնիկների հետ ապրում են կարնեցիներ, բասենցիներ, կարսեցիներ, արդահանցիներ: Բոլնիս-Խաչենում ապրում են վերաբնակներ Մարտակերտի շրջանի Ղազանչի գյուղից: Այս գյուղից են տեղափոխվել նաև Վրաստանի Դադիթ գյուղի բնակիչները:

Թվարկված միություններում թվական գերազանցություն ունեն Կարնո բարբառը որպես հաղորդակցության միջոց ունեցողները: Դրանք են՝ «Շիրակ», «Էրզրում», «Բասեն», «Ախալցխացիներ», «Ջավախք»:

Արևմտյան խմբակցության «կը» ճյուղի Կարնո բարբառի կենտրոնը Կարինն էր: Բարբառի սահմանները տարածվել են մինչև Խնուս, Երզնկա, Գյումուշխանե: Կարնո բարբառի խոսվածքներով են խոսել Կարսի, Բասենի, Նարմանի, Խոտրջուրի, Բաբերդի, Սպերի հայերը:

Կարնո բարբառի մասին մատենագրական առաջին վկայության հանդիպում ենք 8-րդ դարում: Ստեփանոս Սյունեցին, վերլուծելով Թրակացու քերականությունը, խոսում է ծայրագավառային բարբառների՝ «գբառն գեգերականս» մասին և հիշատակում է նաև «գՍպերացն», այսինքն՝ Սպերի խոսվածքն իբրև բարբառ:

13-րդ դարում Հովհաննես Երզնկացին Թրակացու քերականությանն անդրադառնալիս հաստատում է Սյունեցուն, և ինքն էլ իր հերթին խոսում այս բարբառի մասին: 17-րդ դ. Հակոբ Կարնեցին, որպես այդ տարածքի բարբառակիր, իր շարադրանքում

դրստորում է հարազատ բարբառի ազդեցությունը:

1887 թ. ռուս լեզվաբան Թոմսոնը «Լեզվաբանական հետազոտություններ» հոդվածաշարում համառոտակի անդրադառնում է Ախալցխեի խոսվածքին:

1827-28 ռուս-թուրքական պատերազմից հետո այդ տարածքի բնակիչների մեծ մասը տեղաշարժվել է դեպի Արևելյան Հայաստան և Վրաստան՝ մասնավորաբար Ախալցխե, Ախալքալաք, Թբիլիսի: Այսօր էլ Ախալցխեի, Ախալքալաքի և Բոգդանովկայի շրջանի հայկական գյուղերը խոսում են Կարնո բարբառի համապատասխան խոսվածքներով (բացառությամբ Մուշից գաղթած Հեշտիա, Թորիա, Ուժմանա, Դիլիֆ և Փոկա գյուղերի):

Այժմ Կարնո բարբառը Գյումրիի և մերձակա շրջանների՝ Արթիկի, Ախուրյանի, Ադինի բնակիչների խոսակցական լեզուն է: Կարնո բարբառը կրող գյուղեր կան նաև Թալինի, Արագածի և այլ շրջաններում: Կարմիրի շրջանի Մարտունի գյուղի բնակիչները ևս խոսում են Կարնո բարբառով. գյուղի բնակիչները 1827-28 թվականներին գաղթել են Կարսի Փալդրվան գյուղից և պահպանել են հարազատ բնակավայրի լեզուն՝ չնայած շրջակա բնակչության այլախոսվածք լինելուն:

Թալինի Նոր կամ Փոքր Արթիկ գյուղում Հադիճից տեղափոխվածները խոսում են Կարնո բարբառի Շիրակի խոսվածքով:

Կարնո բարբառը պահպանել են բասենցիները, որոնք ապրում են Բուժականում (1915 թ. Վերին Բասենի Ալիճագրակ գյուղից գաղթածներ), Գեղաձորում, Լեռնապարում, Արուձում (այստեղ կան նաև Մակուի վերաբնակիչներ): Արուճի խոսվածքն այսօր մեծապես կրել է Արարատյան բարբառի ազդեցությունը, չնայած բասենցիները պահպանել են Կարնո բարբառին բնորոշ բաղաձայնների հնչերանգը:

Կարսեցիները ևս լավ պահպանել են բարբառը, որոնք ապրում են Թալինում, Գեղադիրում (1827 թ. Կարսի Քյաքաչ), Կապուտանում (1918 թ. Կարսի Չոլախլու), Արարատի շրջանի Ուրցաձորում (Կարսի Քյուրագդարան) և այլուր:

Եղեռնից մազապուրծ համշենցիները, կորցնելով իրենց բնօրրանը, բնակություն հաստատեցին լիովին օտար լեզվական միջավայրում, սակայն չձուլվեցին և մինչև օրս խոսում են մայրենի բարբառով: Ճորոխի հովտում բարձրաբերձ լեռներով շրջապատված Համշեն գավառը ամբողջապես հայաբնակ է եղել: Հր. Աճառյանը «Համշենի բարբառը» գրքում գրում է, որ թուրքերը մտնում են այս գավառը և ավեր ու ջարդ սփռելով՝ ստիպում ժողովրդին մահմեդականություն ընդունել: Համշենահայերը, հատկապես սեզեցիները (ի դեպ, Աբխազիայում կա Չյորնայա րեչկա հայաբնակ գյուղ), դիմադրում են, շատերը կոտորվում են, մնացած մասը թողնում է Համշենը՝ հասնելով մինչև Նիկոմեդիա, մյուս մասն էլ՝ Սև ծովի արևելյան ափերը:

Այսօր մահմեդականություն ընդունած համշենահայերը ապրում են Համշենում, Տրապիզոնում, Սամսոնում, Օրդուում, Ճանիկում և այլուր: Չգաղթած հայությունը հեռացել է արմատներից, մոռացել ազգային պատկանելությունը, չնայած խոսում է Համշենի բարբառով և իրեն համշենցի է կոչում:

1915 թ. հետո բազրկանդցիները բնակություն են հաստատել մասնավորաբար Ապարանի, Մարտունու, Թալինի գյուղերում և ներկայումս խոսում են Մուշի բարբառի Ալաշկերտի խոսվածքով: Բարբառախոս մշեցիներ և բազրկանդ-ալաշկերտցիներ ապրում են Մաստարայում, Ոսկեթասում, Հացաշենում, Գառնահովիտում, Եղնիկում,

Մուսերում, Ցամաքասարում (Ցրոնք), Մելիքյուղում, Վարդաբլուրում, Հարթավանում (Մանգասար, Երիցու գյուղ, Խըտըր, Դիտամ և այլն), Ապարանի շրջանի Արագածում (գյուղում 1828-30 թթ. Մուշից, Ալաշկերտից գաղթածների բարբառով են խոսում փոքրաթիվ սասունցիները՝ մոռանալով իրենց բարբառը), Լուսապյուղում, Սարալանջում, Չքնաղում և այլուր: Չքնաղ գյուղում 1827 թ. Մուշի տարբեր գյուղերից գաղթածների հետ ապրում են դարաբաղցիներ, որոնք մոռացել են մայրենի բարբառը և այսօր խոսում են Մուշի բարբառով: Մինչև օրս էլ գյուղի մեծերը նրանց կոչում են *կարաբաղի տոյլ*:

Արևմտյան Հայաստանից գաղթածները Արևելյան Հայաստանում հաճախ իրենց բնակավայրերը հիմնել են բացառապես համապատասխանությունով և նոր բնակավայրի անունը կոչել հնով: Նման վայրերում բարբառները կենսունակ են:

Մուշի բարբառը հաղորդակցության միջոց է նաև «Մասուն-Տարոն» հայրենակցական միության անդամների համար: «Մասուն-Տարոն», նաև «Էրզիր» կազմակերպություններին հարազատ է Մասունի բարբառը, որն այսօր խոսվում է Թալինի և Աշտարակի շրջանի բացառապես սասունցիներով բնակեցված գյուղերում: Իրենց բարբառը մաքուր պահած սասունցիներ ապրում են Դավթաշենում (քրդամանցիներ), Դիանում (կուփեցիներ), Ահազխում (խուլփեցիներ), Լեռնարոտում (զլեցիներ, հերթինցիներ, տալվորիկցիներ), Ուջանում (Հազգո//Հըզգո քաղաքից 1915 թ. գաղթածներ), Կաքավաձորում (Հազգո-Խաբլըզո գավառակում գտնվող Տնգետ գյուղից, մասամբ նաև Մուշից), Դաշտաղեմում (Մասունի դաշտաղեմցիներ, խութեցիներ), Թալինի Ագարակում (սասունցիներ և մշեցիներ), Վերին և Ներքին Բազմաբերդում, Իրինդում (Խութից, Սեմալից, Գյարմալից, Հավատորիկից, Դաշտաղեմից, Իշխանձորից գաղթածներ), Աշնակում (տալվորիկցիներ, մըչգեղցիներ, փիշընցիներ, սնիդցիներ, սեմալցիներ), Շղարշիկում (հավատորիկցիներ, մոտկանցիներ), Կաթնաղբյուրում (իշխանձորցիներ և փեթարցիներ), Տեղերում (Դըղըր) և այլն:

Նշված բնակավայրերում ապրում են նաև 1915 թ. Մուշից և Տարոնի դաշտի այլ բնակավայրերից բռնագաղթվածներ, որոնց համար ևս հաղորդակցության միջոց է Մասունի բարբառը:

1828-29 թթ. արձափցիները բնակություն են հաստատում Սևանի ավազանում, Ծովագյուղում, Հրազդանի շրջանի Մեղրաձորում, Նաիրիի շրջանի Արագյուղում: Չնայած գրական արևելահայերենի մեծ ազդեցությանը՝ նշված բնակավայրերը որոշ փոփոխություններով պահպանել են մայրենի բարբառը:

Կողբից, Իգդիրից 1918 թ. գաղթածները բնակություն են հաստատել Մասիսի շրջանի Գետափ, Հոկտեմբերյանի Մրգաշատ գյուղերում և մասամբ պահպանել մայրենի բարբառը:

դ) *Միություններ, որոնք կորցրել են և՛ բնօրրանը, և՛ մայրենի բարբառը*: Այդպիսի միություններից են՝ «Վասպուրական», «Զեյթուն պատմամշակութային միություն», «Արծվաբույն-Զեյթուն», «Ադանա», «Արաբկիր», «Խարբերդ», «Բագրատունիներ»: Անիի հայերը նախ բնակություն են հաստատել Ղրիմում, ապա՝ Նոր Նախիջևանում: Նրանցից շատերը անցել են Սուլավա, ստեղծել են հունգարահայ գաղութը: Անիի շրջակա գյուղերի վերաբնակների հետնորդներն այսօր ապրում են նաև Ծաղկահովիտում:

Վանի ինքնապաշտպանական մարտերից հետո վասպուրականցիները շարժվել են տարբեր ուղղություններով: Քաղաքաբնակները հիմնականում բնակություն են հաստատել Երևանում, Թիֆլիսում: Շատերը մեկնել են օտար երկրներ: Վանի նահանգի բնակչության մեծ մասը նախ անցել է Իրաք, բնակություն հաստատել Բաղդադում և այլ քաղաքներում: Հայաստանի խորհրդայնացումից հետո շատերը ներգաղթել են և բնակություն հաստատել Արարատի մարզում, ինչպես նաև Թալինում, Ապարանում, Վարդենիսում և այլուր: Վանեցիներ ապրում են Ոսկեհատում (Արծկեի Առնջկույս գյուղից, Արճեշից 1915 թ. գաղթածներ, նաև ոչտունցիներ՝ վոշիկներ: Արծկեից տեղահանված ոչտունցիներ կան Աղձքում, Վարդենիսի շրջանի Տրետուքում): Ձորափցիների զգալի մասը տեղահանվել է 1915 թ. Վանա լճի հյուսիսային ափերից՝ պատմական Քաջբերունիքից՝ մասնավորաբար՝ Արծկեի գյուղերից (ավելի մանրամասն տե՛ս **Հ. Մեսրոպյան**, Արագածոտնի մարզի բարբառային ընդհանուր պատկերը, «Էջմիածին», 2005, հունիս, էջ 108-117):

Այսպիսի լայնածավալ ընթացքը պատճառ է դարձել Վանի հանրության մասնատման և բարբառի մահացման: Վանի բարբառը, հայտնվելով գրական լեզվի խոսակցական տարբերակի, ինչպես նաև ավելի ուժեղ բարբառախոս միավորների շրջապատման մեջ, աստիճանաբար տեղի է տվել և մոռացվել:

Հաճախ Վանի և Մուշի շրջակա տարածքների գաղթականները հաստատվել են միևնույն բնակավայրում, որտեղ տեղի է ունեցել բարբառների փոխազդեցություն՝ գրական-ժողովրդախոսակցական արևելահայերենի ազդեցությամբ: Այդպիսի բնակավայրերից են Թալինը, Ապարանը, Քուչակը, Վարդենիսը, Արեգը և մի շարք գյուղեր:

Ադանայի հայերը թրքախոս են եղել՝ չնայած իրենց լեզվում ունեցել են բազմաթիվ հայերեն բարբառային բառեր:

Արաբկիր քաղաքի խոսվածքը էականորեն տարբերվել է շրջակա գյուղերի՝ Ադն, Անջրդի, Շագ, Ամբրկա, Շեպիք, Հոնար գյուղերի խոսվածքներից: Մոտ 35-40 հազար հայ բնակչություն ունեցած արաբկիրցիները ցրվել են աշխարհով մեկ և մոռացել իրենց բարբառը: Երևան քաղաքի Արաբկիր թաղամասում վերահաստատված արաբկիրցիների լեզուն կրել է գրական արևելահայերենի ազդեցությունը և ամբողջովին ձուլվել:

Խարբերդի նահանգի Հապուսի, Իչմե, Ախսա, Շեյխաճի, Մուզուր օղլի, Աղմրգե, Առողիկ, Աղնցիք, Գումք, Գեղվանք, Սարբուլի, Գայլու, Հոդե, Մուռի, Վարդաթիլ, Փարչանչ, Խուլլի, Կարմըրե, Դատեմ, Մորենիկ, Քեսրիկ (<Կայսրիկ), Սորսըրե, Եղեգի, Խուլագեղ, Բազմաշեն, Չոր Գեղ, Նեքիրեկ, Ինսոր, Էրզուրուկ, Արփավուտ, Ախոռ, Ալիշամ, Կատասիկ գյուղերի բնակիչները ևս սփռվել են աշխարհով մեկ և մոռացել մայրենի բարբառը: Դեռևս 1890 թվականից խարբերդցիները սկսել են գաղթել Կիլիկիա և Ամերիկա: Խարբերդի Հապուսի //Հաբուսու գյուղացիներ կան Արարատի շրջանի Արմաշ գյուղում, որոնք արդեն լիովին մոռացել են մայրենին:

Այսպիսով՝ օրըստօրե անխուսափելի է դառնում որոշ բարբառների լիովին անհետացումը: Լեզվական այդ հարստությունը կարող է պահպանվել բարբառային քարտեզագրման միջոցով, որի իրականացմանը կարող են օժանդակել նաև հայրենակցական միությունները: